600.0258.10.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 հուլիսի 2019 թվականի №258Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի №339Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՆԻԳԱՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի մարտի 19-ի №11 և հունիսի 17-ի №20 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 2-ի «ՆԻԳԱՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ապարան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №339Ա՝

    1) որոշման մեջ «Ջրամբար համայնքի վարչական տարածքում» բառերը փոխարինել «Ապարան համայնքի վարչական տարածքում (գյուղ Ջրամբար)» բառերով, իսկ «մինչև 2019 թվականի օգոստոսի 2-ը» բառերը՝ «մինչև 2019 թվականի հուլիսի 11-ը» բառերով.

    2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 1650 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) հիդրոտուրբին №1՝ F-550/22, 550 կՎտ, 2018թ.,
2) գեներատոր №1՝ СГ-2-630-12 КУ4, 630 կՎտ, 2016թ.,
3) հիդրոտուրբին №2՝ F-550/22, 550 կՎտ, 2018թ.,
4) գեներատոր №2՝ СГ-2-630-12 КУ4, 630 կՎտ, 2016թ.,
5) հիդրոտուրբին №3՝ F-550/22, 550 կՎտ, 2018թ.,
6) գեներատոր №3՝ СГ-2-630-12 КУ4, 630 կՎտ, 2016թ.:»:

2. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի հուլիսի 13-ի №4078-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 3,780,000 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 10-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
10 հուլիսի 2019թ.